ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆՑՎՈՂ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԵԱՆՑԵՐԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2022/01Շ-6

ք. Երևան «26» «04» 2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Ստեփանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին իրականցվող հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, **ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման** համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման

իրավիճակի համար պայմանագրով նախատեսված սրբոցսսրը և Գանձապետը գրա[illegible]
է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը 2023թ. համար կազմում է 61 665 030 (վաթսունմեկ միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Հաջորդ տարիներին պայմանագրի կատարման գին կսահմանվի ըստ սույն պայմանագրի N 1.1 հավելվածով սահմված միավոր (1քմ) գնի հաշվարկով՝ ըստ յուրաքանչյուր տարվա համար համաձայնագրով հաստատված նշագծման մակերեսի:

Աշխատանքի կատարման գինը գործոնային է և կարող է փոփոխվել կախված սպասարկվող ճանապարհների երկարության, ճանապարհների վիճակի, ճանապարհների պահպանման մակարդակի փոփոխության հետ:

Հաջորդ տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով, պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Եթե կատարողը երկու անգամ անընդմեջ թույլ է տալիս ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով նախատեսված խախտումները և դրանք չի վերացնում նույն աղյուսակում նշված ժամկետում, պայմանագիրը ենթակա է միկողմանի լուծման:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը [illegible] հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը [illegible]
Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ: Յուրաքանրյուր ամիս ներկայացված կատարողականին համամասնորեն որակավորման ապահովման գումարը ենթակա է նվազեցման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ,պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, սեփական մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն

հաջորդող օրվանից: Պայմանագրին անբաժանելի մասը կազմող ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն հաջորդ տարիների համար իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ ք. Երևան, Միկոյան 4շ. 29բն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011012136	ՀՀ 1150021392572591
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 02835332
Գլխավոր քարտուղար	տնօրեն
Ա. Երիցյան	Հ. Ստեփանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
«26» «04» 2023թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
						կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	2023թ. գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
2 (2)	45231176/68	Ներկայացվում է ստորև	դրամ	**37 304 550**	1	Ներկայացվում է ստորև	Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով և կնքվելու տարվան հաջորդող չորս տարիների ընթացքում աշխատանքների կատարումը կիրականացվի յուրաքանչյուր տարի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան 25.12.2026թ.
3 (3)	45231176/68	Ներկայացվում է ստորև	դրամ	**24 360 480**	1		

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
2-րդ և 3-րդ չափաբաժինների համար

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման ձեռքբերման

ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման աշխատանքները կապալառուն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական եվ ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների պահպանման աշխատանքների կատարման և ընդունման կարգի պահանջները:

Կապալառուն պարտավոր է ապահովել ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական եվ ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշումը և տեսանելիությունը համապատասխան ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշմամբ հաստատված նորմերի:

1. Գծանշումը կարող է կատարվել տարբեր նյութերով (ներկով, ջերմապլաստիկով, սառը պլաստիկով, պոլիմերային ժապավեններով, հատային կաղապարներով, լուսանդրադարձիչներով և այլն):

2. Գծանշումներ կատարելիս՝ դրանց շեղումը նախագծային դրույթից չպետք է գերազանցի 5 սմ-ը:

3. Գծանշվող գծերի չափերի շեղումները չպետք է գերազանցեն՝

1) 1 սմ-ը՝ գծի լայնությամբ.

2) 5 սմ-ը՝ նրբագծերի և խզվածքների երկարությամբ:

4. Գծանշումը երթևեկելի մասի մակերևույթից չպետք է բարձր լինի 6 մմ:

5. Վարորդների տեսողական կողմնորոշման համար կիրառվող լուսանդրադարձիչները՝ ինքնուրույն կամ հորիզոնական գծանշման հետ զուգակցված, երթևեկելի մասի մակերևույթից չպետք է բարձր լինեն 20 մմ:

6. Գծանշման գործակիցները հետևյալն են՝

1) չոր վիճակում գծանշման համար պայծառությունը (b_V).

2) չոր ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձումը (R_L).

3) անձրևի և թաց ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձումը (R_W).

4) չոր վիճակում ցրված լույսի կամ արհեստական լուսավորության դեպքում լուսարտացոլումը (Qd):

7. Ճանապարհային պայմաններից ելնելով՝ գծանշման գործակիցներն ընտրվում են ըստ N 1 և N 2 աղյուսակների:

8. Ջերմապլաստիկով, սառը պլաստիկով կամ նման այլ նյութերով կատարված գծանշումը պետք է ունենա մեկ տարվանից ոչ պակաս, իսկ լաքաներկանյութով կատարված գծանշումը՝ 6 ամսվանից ոչ պակաս գործառութային երկարակեցություն:

9. Գծանշման գործառութային երկարակեցությունը որոշվում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում գծանշումը համապատասխանում է սույն կանոնների պահանջներին, և 50 մ երկարությամբ յուրաքանչյուր վերահսկվող տեղամասում գծանշման մակերեսի մաշվածքը չի գերազանցում 50%-ը՝ գծանշումը ներկով կատարելու դեպքում, իսկ գծանշումը ջերմապլաստիկով կամ երկարակյաց այլ նյութերով կատարելու դեպքում՝ 25%-ը:

10. Նոր գծապատկերով գծանշում կատարելու դեպքում հին գծանշումը չպետք է տեսանելի լինի:

11. Ճանապարհների գծանշումը, բացառությամբ չորրորդ կարգի ճանապարհների, պետք է կատարվի լուսանդրադարձիչ նյութերի կիրառմամբ:

12. Արհեստական լուսավորություն չունեցող ճանապարհների տեղամասերում **2.1-2.3** գծանշումների (նկար 15) սպիտակ գծերը պետք է կատարվեն լուսանդրադարձիչ նյութով (բացառությամբ ներքին լուսավորություն ունեցող կարճասյուների), իսկ **2.4-2.6** գծանշմամբ նշված (նկար 17) ճանապարհային ցանկապատները և ուղղորդ սարքվածքները պետք է ունենան լուսանդրադարձիչ տարրեր:

13. Ճանապարհային ցանկապատների մակերևույթին **2.4-2.6** գծանշումներով կամ առանց դրանց կիրառվող լուսանդրադարձիչ տարրերը երթևեկության ուղղությամբ երթևեկելի մասի աջ կողմում պետք է լինեն կարմիր, իսկ ձախ կողմում՝ սպիտակ կամ դեղին գույնի:

14. Գծանշումը շահագործման պահից օրվա բոլոր ժամերին պետք է լավ տեսանելի լինի (ծածկի վրա ձյան բացակայության պայմանում):

15. Ճանապարհների այն տեղամասերում, որտեղ երթևեկության ռեժիմը որոշվում է գծանշման միջոցով, և եթե դրանք դժվար տեսանելի են (ձյուն, ցեխ և այլն) կամ ժամանակին չեն կարող վերականգնվել, ապա կարող են տեղակայվել նույն նշանակությունն ունեցող ճանապարհային նշաններ:

16. Գծանշման վերականգնումն անհրաժեշտ է կատարել գործող տեխնիկական և շինարարական նորմերին համապատասխան:

17. Գծանշման կառչման գործակիցը չպետք է պակաս լինի ծածկի կառչման 0,75 գործակցից:

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

Ծրագրի անվանումը	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում
Ֆինանսավորման աղբյուր	2023թ. ՀՀ պետական բյուջե

Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	ՀՀ Արարատի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

		Ծ ր ա գ ի ր 2023 թ.				
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Տեխնիկական կարգը	Գծանշվող ճանապարհա-հատվածների երկարությունը /կմ/	1կմ-ում միջին գծանշման մակերեսը /քմ /	Ընդամենը գծանշման մակերեսը /քմ /
	Արարատի տարածաշրջան					
	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ34,8-կմ47,3 կմ47,3-կմ91,5	12.50	I	11.10	900	9990.0
		44.2	II-IV	27.35	255	6974.3
2	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 77,5-կմ 81,5 (երրորդ գիծ)	4.00		0.00	100	0.0
3	Ոսկետափի տրանսպորտային հանգույց	0.85	II-IV	0.85	55	46.8
4	Ավշարի տրանսպորտային հանգույց	0.53	II-IV	0.53	55	29.2
5	Արարատի տրանսպորտային հանգույց	0.97	II-IV	0.97	55	53.4
6	Շահումյանի տրանսպորտային հանգույց	0.60	II-IV	0.6	55	33.0
7	Հ-8, Մ2-Արտաշատ-Այգևան-Արարատի տր.հանգույց կմ28,7-կմ42,2	13.50	II-IV	13.50	255	3442.5
8	Հ10, Ոսկետափ-Վեդի-Լանջար-ՄՃ/Մ-2/ կմ0-կմ41,4	41.40	II-IV	41.40	55	2277.0
9	Ոսկետափի տրանսպորտային հանգույց - Հ8	1.00	II-IV	1.00	55	55.0
10	Հ-11, Մ2-Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 կմ 0-կմ 15,3	15.30	II-IV	3.10	255	790.5
				10.20	55	561.0
11	Մոտեցում Խոր Վիրապին կմ 0-կմ1,7	1.70	II-IV	1.30	255	331.5
	Ընդամենը			**111.90**		**24584.00**
	Միջպետական - I			**11.10**		**9990.00**
	Միջպետական - II-IV			**30.3**		**7136.5**
	Հանրապետական - II-IV			**70.5**		**7457.5**
	Արտաշատի տարածաշրջան					
	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
1	Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ28.9-կմ34,8	5.90	I	0.00	900	0.0
2	Դիմիտրովի տրանսպորտային հանգույց	1.50	II-IV	1.50	55	82.5

3	Արտաշատի տրանսպորտային հանգույց	1.20	II-IV	1.2	55	66.0
4	Հ-8 Երևան-Արտաշատ-Ագևան-ՄՃ/Մ2/ կմ 9,1- կմ 28,7	19.60	II-IV	19.60	255	4998.0
5	/Հ8/Դալար-Արտաշատի տրանսպորտային հանգույց կմ 0-կմ 2,5	2.50	II-IV	2.50	55	137.5
6	Հ-8- Բերքանուշ-Դվին կմ0.0-կմ8,0	8.0	II-IV	8.00	55	440.0
	Ընդամենը			**32.8**		**5724.00**
	Միջպետական - I			**0.00**		**0.00**
	Միջպետական - II-IV			**2.7**		**148.50**
	Հանրապետական - II-IV			**30.1**		**5575.50**

Մասիսի տարածաշրջան

	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
1	Մասիսի տրանսպորտային հանգույց	3.25	II-IV	3.25	55	178.8
2	Մ-15, /Մ4/Վերին Պտղնի-Մասիսի տր.հանգույց /Երևանի շրջանց/ կմ 20,2-կմ 29,4	9.20	II-IV	0.00	55	0.0
3	Հ-8 Երևան-Արտաշատ-Այգևան-ՄՃ/Մ-2/ կմ0-կմ9,1	9.10	II-IV	9.10	255	2320.5
4	Հ-12, Մասիսի տր.հանգույց-Մասիս-Ռանչպար կմ 9,5-կմ 13,2	3.70	II-IV	0.00	55	0.0
5	Հ-13, /Մ3/ -Վաղարշապատ-Մասիս-ՄՃ/Մ2/ կմ 6,65-կմ18,45	11.80	II-IV	6.80	255	1734.0
	Ընդամենը			**19.15**		**4233.25**
	Միջպետական - I			**0.00**		**0.00**
	Միջպետական - II-IV			**3.3**		**178.75**
	Հանրապետական - II-IV			**15.9**		**4054.50**

Չափաբաժին 3

ՀՀ Արմավիրի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

Ծրագրի անվանումը	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում
Ֆինանսավորման աղբյուր	2023թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	ՀՀ Արմավիրի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների

		Ծրագիր 2023թ.				
No	Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Սպասարկվող ճանապարհա-հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Տեխնիկական կարգը	Գծանշվող ճանապարհա-հատվածների երկարությունը /կմ/	1կմ-ում միջին գծանշման մակերեսը /քմ /	Ընդամենը ման մակերեսը /քմ /
	Էջմիածնի տարածաշրջան					
	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
	Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման կմ 10,44- կմ 17,54	**7.1**	I	**7.1**	900	6390.00
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 6,6-կմ17,9 և կմ21,5-կմ28,5	18.30	II-IV	12.90	55	709.50
2	Վաղարշապատի շրջանց կմ0-կմ4,6	4.60	II-IV	4.60	55	253.00
3	Վաղարշապատի շրջանցի տր.հանգույց	1.10	II-IV	1.10	55	60.50
4	/Մ5//-Աշտարակ տրանսպորտային հանգույց	0.40	II-IV	0.40	55	22.00
5	Զվարթնոցի տրանասպորտային հանգույց	0.80	II-IV	0.80	55	44.00
6	Վաղարշապատ-Ծաղկունք տրանասպորտային հանգույց	1.80	II-IV	1.80	55	99.00
7	Ակնալիճի տրանասպորտային հանգույց	0.40	II-IV	0.40	55	22.00
8	Հ-13 Վաղարշապատ-Մասիս-ՄՃ/Մ-2/ կմ0,65-կմ6,65	6.00	II-IV	6.00	255	1530.00
9	Հ-76, Մ5-Ակնալիճ-Մեծամորի թանգարան	5.40	II-IV	5.40	55	297.00
	Ընդամենը			**40.10**		**9427.00**
	Միջպետական - I			**7.10**		**6390.00**
	Միջպետական - II-IV			**21.60**		**1210.00**
	Հանրապետական - II-IV			**11.40**		**1827.00**
	Արմավիրի տարածաշրջան					
	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
1	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ0-կմ6,6	6.60	II-IV	2.00	55	110.0
	Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման կմ 43,0- կմ 54,4	10.20	I	10.20	900	9180.0
2		1.20	II-IV	1.20	55	66.0
3	Հ-15, /Նորապատ/-Արգավանդ-Մ3 կմ 0-կմ 20,0	20.00	II-IV	0.00	55	0.0
4	Հ-16 Մ-5-Մեծամոր-ՀԱԷԿ-Մ-5 կմ0-կմ10.7	10.70	II-IV	10.70	55	588.5
5	Հ-17 Մ-5-Արմավիր-Մ-9 կմ0-կմ9,4	9.40	II-IV	7.40	55	407.0
	Ընդամենը			**31.50**		**10351.5**
	Միջպետական - I			**10.2**		**9180.0**
	Միջպետական - II-IV			**3.2**		**176.0**
	Հանրապետական - II-IV			**18.10**		**995.5**

	Բաղրամյանի տարածաշրջան					
	Ներկանյութերով (էմալով) գծանշում					
1	Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման կմ 54,4-կմ58,4	4.00	II-IV	4.00	55	220
2	Մ-9 Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման կմ 19-կմ 58,0	39.00	II-IV	22.00	55	1210
3	Հ-17 Մ-5-Արմավիր-Մ-9 կմ9,4-կմ22.8	13.40	II-IV	13.40	55	737
4	Հ-18,Մ5-Վանանդ-Մ9 կմ 0-կմ 11,1	11.10	II-IV	11.10	55	610.5
	Ընդամենը			**50.50**		**2777.50**
	Միջպետական - II-IV			**26.00**		**1430.00**
	Հանրապետական - II-IV			**24.50**		**1347.50**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Միկոյան 4շ. 29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150021392572591
ՀՎՀՀ 02835332

տնօրեն՝
Հ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ավելված N 1.1
«26» «04» 2023թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-6 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆԸ

2-րդ և 3-րդ չափաբաժինների համար

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանում	Ընդամենը նշագծման մակերեսը 2023թ. համար /քմ/	1քմ արժեքը / ՀՀ դրամ/	Ընդամենը 2023թ. համար /ՀՀ Դրամ/
2	ՀՀ Արարատի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	34 541.25	1 080	37 304 550
3	ՀՀ Արմավիրի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	22 556.00	1 080	24 360 480

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Միկոյան 4շ. 29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150021392572591
ՀՎՀՀ 02835332

տնօրեն
Հ. Մոսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«26» «04» 2023թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ՝ ըստ ամիսների ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
2	45231176/63	ՀՀ Արարատի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	0	0	0	25 000 000	25 000 000	25 000 000	37 304 550	37 304 550	37 304 550	37 304 550	37 304 550	37 304 550	**37 304 550**
3	45231176/68	ՀՀ Արմավիրի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցերի հենարանների ուղղաձիգ գծանշման աշխատանքների	0	0	0	13 000 000	13 000 000	13 000 000	24 360 480	24 360 480	24 360 480	24 360 480	24 360 480	24 360 480	**24 360 480**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Միկոյան 4շ. 29բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150021392572591
ՀՎՀՀ 02835332

տնօրեն՝
Հ. Մարեմյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«26» «04» 2023թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«26» « 04 » 2023թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01Շ-6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուիանունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
___
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն